

ՀՀ ԳԱԱ ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՈՒՍՅԱԿ ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆՑ

<<ՏՈՒՆ >> ՀԱՄԿԱՅՈՒՑԹՇ

ՀԱՅ ԵՎ ԱՆԳԼԱՍՏԵՐԻԿՅԱՆ ԼԵԶՎԱՍՇԱԿՈՒՑԹՆԵՐՈՒՄ

Ժ.02.03 - <<Համեմատական և տիպաբանական լեզվաբանություն>>
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բ.գ. թ., դոցենտ Գ. Վ. Եղիազարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բ. գ. դ. պրոֆ. Գ. Ռ. Հովհաննիսյան

բ. գ. թ., դոցենտ Կ. Ա. Վեյյան

Առաջատար կազմակերպություն՝

Վանաձորի Հովհ. Թումանյանի
անվան պետական մանկավարժական
ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2013 թ. Հոկտեմբերի 7-ին ժամը 15.00-ին, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՂ-ի 019 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0015, Երևան, Գրիգոր Լուսավորչի 15

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. Սեպտեմբերի 3-ին

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
բան, գիտ. թեկնածու

Ն. Միմնյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Վերջին տարիներին գիտական մտածողության պատմակառուցվածքային հարացույցից մարդաբանական հարացույցին անցումն անհրաժեշտաբար ենթադրում էր մի շարք հասկացությունների վերախմաստավորում, և այդ հեղափոխական առաքելությունը ստանձնեցին մարդու մտագործունեության՝ գիտելիքի, ճանաչողության և աշխարհընկալման մասին նոր գիտությունը՝ *ճանաչողաբանությունը* և լեզվի ու մշակույթի փոխներգործուն, փոխպայմանավորված ընթացքն ուսումնասիրող *լեզվամշակութաբանությունը*:

Եթե լեզվամշակութաբանությունը ուսումնասիրում է լեզու - մշակույթ առնչությունը, ապա ճանաչողական լեզվաբանությունը նպատակ ունի ներկայացնել լեզու-ճանաչողությունն աղերսները և աշխարհի լեզվական պատկերի կադապարումը լեզվակրի գիտակցության մեջ: Այս երկու գիտակարգերի հիմնական միավորներից է **հասկացույթը**, որը մեծ ուշադրության է արժանացել տարբեր լեզվաբանների և մշակութաբանների կողմից և ստացել է բազմաթիվ բնորոշումներ:

Սույն ատենախոսության ուսումնասիրության **առարկան** է **տուն** հասկացույթը հայ, բրիտանական և ամերիկյան լեզվամշակույթներում: Որպես ուսումնասիրության **լեզվակնյութ** ծառայել են հայերեն և անգլերեն **տուն** հասկացույթն առկայացնող բառային և դարձվածային միավորները (այսուհետ՝ ԴՄ), ասացվածքներն ու առածները: Բառարանային համատարած ընտրանքի սկզբունքով դուրս են բերվել **տուն** հասկացույթն անվանակարգող հայերեն 24 և անգլերեն 12 բառային միավոր, ինչպես նաև՝ մոտ 100 հայերեն և 70 անգլերեն ԴՄ-ներ, ասացվածքներ ու առածներ: Հասկացույթի կիրառությունները լուսաբանվել են հայերեն և անգլերեն գեղարվեստական գրականությունից դուրս բերված օրինակներով:

Ուսումնասիրության արդիականությունը: Ատենախոսության **թեմայի** ընտրությունը և **արդիականությունը** պայմանավորված է ժամանակակից լեզվաբանական ուսումնասիրություններում հասկացույթների վերլուծության, դրանց տեղն ու դերը տվյալ ժողովրդի լեզվամշակույթում վեր հանելու կարևորությամբ: Ժամանակակից լեզվաբանությունն այսօր դժվար է պատկերացնել առանձին, միայն որպես լեզվական երևույթներ ուսումնասիրող գիտություն. այն այսօր ուսումնասիրում է լեզուն հարաշարժ համադրության համատեքստում՝ անդրադարձնալով տվյալ հանրույթի մշակույթին, հաշվի առնելով տվյալ լեզվակրի գիտակցության և ճանաչողության ազգային առանձնահատկությունները: Ուսումնասիրության թեման ժամանակավրեպ չէ նաև այն պատճառով, որ տարբեր երկրների միջև քաղաքական, հասարակական, մշակութային կապերի բուռն զարգացումների այսօրվա պայմաններում լեզվամշակութային համեմատությունների խնդիրն ավելի արդիական է դառնում:

Ուսումնասիրության գիտական նորույթը: Աշխատանքի գիտական **նորույթն** այն է, որ **տուն** հասկացության վերլուծության ընթացքում իմաստաբանական հարացույցի փոխարեն կիրառվում է համեմատաբար նոր՝ ճանաչողական հարացույցը: Առաջին անգամ են ուսումնասիրվում նաև **տուն** հասկացության հասկացական, պատկերային, արժեքային, մշակութային դրսևորումները և դրա առկայացման միջոցները հայերենի և անգլերենի բառային և դարձվածային շերտերի հիման վրա: Մինչև այսօր հայ լեզվաբանության մեջ չկա առանձին ուսումնասիրություն **տուն** հասկացության վերաբերյալ, առավել ևս՝ այդ հասկացության համեմատական ուսումնասիրություն՝ հայերենում և անգլերենում: Թեև **տուն** հասկացությամբ պատկանում է համընդհանուր հասկացությունների թվին, սակայն ներկայանում է լեզվամշակութային ու ազգային առանձնահատկությունների և տարբերությունների զարգացած համակարգով և չափազանց հետաքրքիր է համեմատական ուսումնասիրության հարացույցում: Առաջին անգամ է իրականացվում **տուն** հասկացության զուգադրական քննությունը երեք՝ հայ, բրիտանական և ամերիկյան լեզվամշակութային երկու, վեր հանվում **տուն** գաղափարի ընկալման նմանություններն ու տարբերությունները՝ երեք մշակութային լեզվամտածողության, հոգեկերտվածքի և կենսափիլիսոփայության համատեքստում: Աշխատանքում **նորույթ** է նաև երկու լեզուներում **տուն** հասկացության իմաստային և զուգորդային դաշտերի կառուցումը և դրանց զուգադրումը երկու լեզուներում, ինչպես նաև հասկացության գործածության ոլորտները և օգտագործման հաճախականությունը փաստագրող կորպուսային վերլուծությունը:

Ատենախոսության նպատակը: Աշխատանքի **նպատակն** է ուսումնասիրել **տուն** հասկացության անվանակարգման միջոցները բառային և դարձվածային մակարդակներում և զուգադրական վերլուծության ենթարկել հասկացության լեզվականացման կաղապարները հայերենում և անգլերենում, ինչպես նաև ներկայացնել այս հասկացության զուգորդային դաշտերը երկու ուսումնասիրվող լեզուներում՝ վերհանելով **տան/օջախի** ընկալման ընդհանրություններն ու տարբերակիչ առանձնահատկությունները հայ և անգլախոս հանրությունների գիտակցության մեջ: Իրականացնելով սույն ուսումնասիրությունը, փորձել ենք փաստել, որ **տուն** հասկացությամբ բարդ մտային կառույց է, որն արտացոլում է հասկացական և արժեքային մի շարք առանձնահատկություններ և կարող է հիմք ծառայել հայ, բրիտանական և ամերիկյան ազգային լեզվամտածողության բնորոշ գծերի բացահայտման, դրանցում առկա նմանությունների և տարբերությունների վերհանման և հիմնավորման համար: Այս նպատակին հասնելու համար **ատենախոսության մեջ առաջադրվել են հետևյալ խնդիրները՝**

- ուսումնասիրել ճանաչողական լեզվաբանության և լեզվամշակութաբանության հիմնական միավոր հասկացության եզրույթ, մասնավորապես, **տուն** հասկացությամբ՝ վեր հանելով նրա բաղադրիչները

(հասկացական, պատկերային, արժեքային) հայ և անգլաամերիկյան լեզվամշակույթներում:

- համեմատել **տուն** հասկացույթը անգլերենում և հայերենում, վեր հանել այս հասկացույթի իմաստային ընդհանրական տիպերն ու դրանց լեզվականացման առանձնահատկությունները:
- ժամանակակից հայերենի և անգլերենի դարձվածային և առածային ֆոնդից առանձնացնել **տուն** բաղադրիչով ԴՄ-ների, ասացվածքների ու առածների իմաստային խումբը, վերլուծել դրանց իմաստային դրսևորումները և զուգադրել ստացված արդյունքները՝ կարևորելով լեզվական և արտալեզվական գործոնների դերը երկու մշակույթներում:
- վեր հանել **տուն** հասկացույթի զուգորդային դաշտերը՝ ըստ հայերեն և անգլերեն **տուն** բառը պարունակող դարձվածային միավորների, առածների ու ասացվածքների:
- կորպուսային լեզվաբանության ընձեռած տվյալներն օգտագործելով՝ ուսումնասիրել **տուն** հասկացույթի գործածության ոլորտները և օգտագործման հաճախականությունը:

Ատենախոսության **տեսական-մեթոդաբանական** հիմքը հասկացույթների վերլուծության համակարգային մոտեցումն է՝ *ճանաչողական, մշակութային* և *մարդաբանական* տեսանկյուններից, որոնք կարևորում են մարդկային գործոնի դերը լեզվում:

Լեզվաբանական **մեթոդների** մեր ընտրությունը բխում է ուսումնասիրվող նյութի բնույթից և նպատակից. **տուն** հասկացույթի վերլուծության ընթացքում կիրառվել են բառարանային համատարած ընտրության, բաղադրիչային վերլուծության, զուգադրական և համաժամանակյա զուգահեռ մեկնաբանման մեթոդները (երբեմն անհրաժեշտություն է զգացվել դիմել տարժամանակյա քննության, քանի որ հարկ է եղել պարզել **տուն** բառի, նրանով կազմված ԴՄ-ների, առածների և ասացվածքների ծագման աղբյուրները): Կատարվել է նաև լեզվական կորպուսների ուսումնասիրություն և վիճակագրական վերլուծություն:

Աշխատանքում զետեղված **տեսական** դրույթները հիմնված են գիտական ուսումնասիրություններում տեղ գտած սահմանումների և բնութագրումների վրա, որոնք էլ ձևավորել են սույն ուսումնասիրության հիմնական սկզբունքները: Հաշվի են առնված լեզվաբանական տարբեր դպրոցների և տարբեր լեզվաբանների առաջ քաշած կարևորագույն դրույթներն ու հայեցակարգերը (Ա.Վեժբիցկայա, Ջ. Լակոֆֆ, Մ. Ջոնսոն, Վ. Կարասիկ, Ե. Կուբրյակովա, Ա. Բաբոշկին, Ս. Վորկայտով, Վ. Տելիա, Ն.Արությունովա, Յու.Ստեպանով, Ջ. Պոպովա, Ի. Ստերնին, Ա. Պրիխոդկո Ս.. Ասկոլով, Դ. Լիխայտով և այլք):

Հայերի, բրիտանացիների և ամերիկացիների աշխարհի լեզվական պատկերում **տուն** հասկացույթի անվանակարգման առանձնահատկությունները վերհանելու համար հետևել ենք ճանաչողական լեզվաբանության և

հասկացութաբանության ռուսական դպրոցի ականավոր տեսաբաններ՝ Ջ. Պոպովայի, Ի. Ստերնինի և Ա. Պրիխոդկոյի հայեցակերպերին, ըստ որոնց՝ <<հասկացության անվանակարգումը վեր հանելու համար պետք է պարզել հասկացության բառային-ներկայացուցիչների (лексем-репрезентант) կիրառման հաճախականությունը>>,¹ և <<հասկացության անվանումը պետք է համընկնի համապատասխան հոմանիշային շարքի գերիշխող միավորի /գերմիավորի/ հետ>>:²

Որպես լեզվամշակութային հասկացության վերլուծության հենք հետևել ենք Վ. Ի. Կարասիկի մշակութային հասկացության տեսությանը՝ ընդունելով հասկացությունը որպես բազմաշերտ իմաստային գոյացություն, որտեղ առանձնանում են երեք բաղադրիչ տարրեր՝ *հասկացական, պատկերային* և *արժեքային*:³ Վերլուծել ենք **տուն** հասկացության դերն ու տեղը հայ, բրիտանական և ամերիկյան արժեհամակարգերում, ներկայացրել **տունը** որպես արտեֆակտ /հասկացական և արժեքային բաղադրիչ/, զուգադրել **տուն** հասկացության բառայնացման միջոցները հայերենում և անգլերենում /պատկերային բաղադրիչ/:

Ուսումնասիրության տեսական արժեքը որոշվում է նրանում ներկայացված տեսությունների վերլուծական շարադրմամբ, ինչպես նաև ուսումնասիրության մեթոդների կիրառման արդյունավետությամբ: Ուսումնասիրության մեջ փորձ է արվում առաջադրված հարցադրումների, բացատրությունների և հիմնավորումների միջոցով նպաստել ժամանակակից հայերենի և անգլերենի հասկացության գործառության մեկնաբանմանը, ինչպես նաև՝ համեմատական հասկացութաբանության զարգացմանը:

Ուսումնասիրության գործնական արժեքը նման հետազոտության արդյունքները կարող են ունենալ մի շարք գործնական կիրառություններ և օգտագործվել լեզվամշակութաբանության, ճանաչողական լեզվաբանության, հասկացութաբանության և միջմշակութային հաղորդակցության դասընթացներում: Աշխատանքը կարող է նաև արդյունավետ կիրառություն գտնել հասկացութաբանության բնագավառի այլ հետազոտական աշխատանքներում, ինչպես նաև՝ հայ, բրիտանական և ամերիկյան մշակութային արժեքների փոխանցման նպատակով անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն թարգմանություններում, գործնական ձեռնարկների և երկլեզու բառարանների ստեղծման ժամանակ:

¹ Стернин И.А., Попова И.М., Отдельные статьи, Концепт и значение, 2003, С. 191. <http://sternin.adeptis.ru/articles.html> 20.01.2011.

² Приходько Г. В., Концепт 'Огонь' в картине мира русского народа. _Материалы шестой научной конференции. Новосибирск, 2005. С. 86-89.

³ Карасик В.И., Оценочные доминанты в языковой картине мира // Единство системного и функционального анализа языковых единиц. Белгород, 1997, С.130-157.

Աշխատանքի կառուցվածքը բխում է ատենախոսության առջև դրված նպատակներից և խնդիրներից. այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից և երկու հավելվածից:

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի ընտրությունը, որոշարկվում ուսումնասիրության նպատակն ու մեթոդները, արդիականությունն ու նորությունը, տեսական և գործնական արժեքը:

Առաջին գլուխը, որը վերնագրված է <<**Հասկացութաբանության տեսական հիմքերը**>>, կազմված է երկու ենթագլխից: Առաջին ենթագլխում (<<**Հասկացության գաղափարը. ճանաչողական հասկացություն**>>) ընդհանուր գծերով ներկայացվում են ճանաչողաբանության և ճանաչողական լեզվաբանության հիմնահարցերը, հասկացության սահմանման՝ տարբեր տեսաբանների կողմից մշակված հայեցակարգերը և վերլուծության մեթոդները: Ճանաչողական լեզվաբանության առանցքային խնդիրը՝ <<**բանականություն-լեզու-հասկացությանացում-կարգայնացում-ընկալում**>> ճանաչողական շղթայի փոխհարաբերությունների վերհանումն է, որը ենթադրում է՝ աշխարհը ճանաչելու և վերահիմնաստավորելու գործընթացում լեզվի դերի կարևորումը:

Ըստ ճանաչողաբանների՝ **հասկացությունը** ներկայանում է որպես *շերտավոր* կառույց, որը կազմված է *միջուկից* /հասկացության ճանաչողական համամասնական կառուցվածքը/, *նախամիջուկային շերտից* /հումանիշներ և այլն/ և *ծայրամասից* /գուգորդային-պատկերային ներկայացումներ/:⁴

Երկրորդ ենթագլխում (<<**Հասկացությունը որպես լեզվամշակութային միավոր**>>) տրվում են մշակութային հասկացության բնորոշումները՝ տարբեր տեսաբանների բնութագրմամբ: ⁵

Ըստ Վ. Ի. Կարասիկի՝ <<Հասկացությունը՝ որպես անհատի *գիտակցության մեջ մտային գոյացություն*, ելք է դեպի հանրության հասկացության ոլորտ, այսինքն՝ վերջնական հաշվով՝ դեպի մշակույթ, իսկ հասկացությունը՝ *որպես մշակույթի միավոր*, հանրային փորձի ամրակայումն է, որն էլ անհատի բարոյական արժեքների արտահացումն է>>: Լեզվամշակութային հասկացության լիակատար իմաստաբանական ուսումնասիրության համար առավել շահեկան է

⁴ Лотман Ю. М. Семиотика культуры и понятие текста // Лотман Ю. М. Избранные статьи в 3 томах. Таллинн, 1992; Степанов Ю.С. Концепт культуры <<в разрезе>> // Когнитивная семантика: Материалы Второй международной школы-семинара по когнитивной лингвистике. 11-14 сент., Ч. I. Тамбов, 2000. С. 18-22.

⁵ Степанов Ю.С. Константы: словарь русской культуры / Юрий Степанов. -2-е изд., М., 2001. С. 43-44; Воркачев С.Г. Постулаты лингвокультурологии // Антология концептов / Под ред. В.И. Карасика. И.А. Стернина. М.: Гнозис, 2007. С.32-67.

առանձնացնել նրա երեք բաղադրիչները՝ **հասկացական, պատկերային և արժեքային**,⁶ որոնցից առավել կարևորվում է արժեքային բաղադրիչը:

Եթե ճանաչողական լեզվաբանությունը հասկացույթի բովանդակությունը ուսումնասիրում է հասկացույթի արտահայտման լեզվական միջոցների, ինչպես նաև տեքստերի վերլուծության միջոցով, ապա լեզվամշակութաբանության համատեքստում՝ հասկացույթները տվյալ լեզվի և տվյալ մշակույթի առանցքային բառերն են, որոնց ընտրման չափանիշներն են՝ **հաճախականությունը, կենտրոնայնությունը, դարձվածային արտահայտությունների ընտանիքի** առանցքը կազմելու փաստը:

Երկրորդ գլուխը, որը վերնագրված է <<**Տուն հասկացույթը լեզվամշակութաբանության համատեքստում**>> բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում (<<**Տուն հասկացույթի դերը հայերի, բրիտանացիների և ամերիկացիների աշխարհի լեզվական պատկերում**>>) փորձ է արվում վերհանել **տուն** հասկացույթի հասկացական բաղադրիչը, նրա նախատիպային և հիմնատիպային պատկերացումները, ուսումնասիրվում է **տուն** հասկացույթի դերը հայ, բրիտանական և ամերիկյան արժեհամակարգերում /հասկացույթի հասկացական և արժեքային բաղադրիչ/, ինչպես նաև դիտարկվում է **տունը** որպես արտեֆակտ /հասկացական, արժեքային, գործառական, հաղորդակցական-տեղեկատվական բաղադրիչ/:

Տուն հասկացույթը դասվում է համընդհանուր հասկացույթների շարքին, քանզի նրա ավանդական ընկալումները առկա են գրեթե բոլոր մշակույթներում և քաղաքակրթություններում, և նրա միջոցով առկայանում են մարդու հարմարավետության, պաշտպանվածության և ջերմության զգացումի, բնօրրանի և արմատների պահպանման, ինքնության արտահայտման պահանջունքները: Տան նախատիպային (architype) պատկերացումներում այն զուգորդվում էր սեփական ապահով տարածքի, ինչպես նաև մարդուն արտաքին աշխարհից առանձնացնող և պաշտպանող անկյունի հետ:

Տուն հասկացույթը անգլերենում հիմնականում ներկայացված է **house** և **home**, իսկ հայերենում՝ **տուն** և **օջախ** բառային միավորներով:

Նայի համար **տունը** ինքնության գլխավոր պոնտերից մեկն է: Այն նախ և առաջ **հայրենի օջախն է, ընտանիքը, հոր տունը, այն տունը, ուր նա ծնվել և հասակ է առել**, և ընտանիքի զավակները ինչ գնով էլ լինի փորձում են պահել, պահպանել այն:

Եթե ամերիկացու տան կառուցման տիպական և սկզբունքային առանձնահատկություններն են արագ, յոթ-ութ տարի բնակվելու հեռանկարով շինություն կառուցելը, ապա հայ ավանդական տան կառուցումը բոլորովին

⁶ Карасик В.И., Оценочные доминанты в языковой картине мира // Единство системного и функционального анализа языковых единиц. Белгород, 1997.

հակառակ սկզբունքների է ենթարկվում. տունը պետք է կառուցվի հիմնովին և երկարաժամկետ:

Տան գաղափարը առանցքային է նաև բրիտանական արժեհամակարգում: Դա է վկայում անգլիական *My home is my castle* -իմ տունն իմ ամրոցն է ասացվածքը, որը լավագույնս արտահայտում է տան, նրա անձեռնմխելության, մեկուսի կյանքի, հանգստի և առանձնության ապահովման բրիտանական արժևորումները: Ահա թե ինչպես է բնութագրել բրիտանական տունը Մեծ Բրիտանիայի վարչապետը 1763թ.: <<Ամենատղքատ մարդը կարող է իր խրճիթում չհնազանդվել թագավորի զինվորներին: Խրճիթը կարող է խարխուլ լինել, դուրաբեկ, հնարավոր է տանիքը առանց ծածկի լինի, և քամին էլ մտնի պատերից ներս, բայց Անգլիայի թագավորը չի կարող ներս մտնել>>:⁷

Երեք մշակույթներում էլ **տուն** հասկացույթն անքակտելիորեն կապված է **ընտանիք** հասկացույթի հետ: Հայերի աշխարհընկալման մեջ **ընտանիք** բառը՝ որպես ազգականների, տնեցիների բազմություն, իր հերթին մատնանշում է տան կարևորությունը. ազգ-ընտանիքը պատկերվում է տան մեջ համախմբված: Այս փաստը՝ հայերի ընտանիքի և տան հանգուցային արժեքը, որ բազմաթիվ ապացույցներ ունի նաև ազգագրական ոլորտում՝ հայերենում հավաստվում է նաև ստուգաբանորեն. **տուն** նշանակում է նաև՝ **տան բնակիչներ, ազգատոհմ, ցեղ** և ավելի լայն առումով՝ **երկիր, աշխարհ՝ Կիլիկիո տուն, Սյունյաց տուն** և այլն, իսկ **ընտանիք** բառը նշանակում է <<տանիքի տակ>> **ընդ-«տակ» - տանիք**, այլ կերպ ասած՝ **ընտանիք**:⁸

Նահապետական ավանդույթներով առաջնորդվող հայ ընտանիքում **տան հույսը, տան կանգուն սյունը** և **օջախն ամուր ու հավերժ պահողը** համարվում էր արու գավակը՝ իսկ աղջկա մասին սովորաբար ասում էին՝ **Լավ-վաս, խղի՛ն պատ: Աղջիկը խղուն է, տղան՝ տիրունը, օջախինը** և այլն

Բրիտանական ընտանիքում բոլոր պարտականությունները հստակորեն բաժանված են ամուսնու և կնոջ միջև: Բրիտանական ընտանիքի հիմքը **կինն** է, և ինչպես անգլիական ասացվածքն է ազդարարում՝ կանայք են, որ շենքը, կառույցը դարձնում են օջախ՝ **“Men make houses, women make home”**:

Ամերիկյան մշակույթում **տուն-ընտանիք** գուգորդումն առավել թույլ է արտահայտված. ամերիկյան մշակույթին հատուկ չեն ընտանեկան կրքերը, հուզական պոռթկումները, ամերիկացի կինը ինքնավստահ է և ընտանիքում տղամարդու հետ միասին հավասար իրավունքներ ունի:

Երեք մշակույթներում տարբերություն կա նաև **տան տարածքային ընկալումների** մեջ: Հայի համար, պատմաքաղաքական հայտնի պատճառներով, առավել կարևորվել է պարզապես տանիք ունենալը, և ոչ թե՛ տան մեծությունը:

⁷ Fox K., Watching the English. The Hidden Rules of English Behaviour, London, 2005, p. 134.

⁸Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ.կ. Ե., 1979, էջ 427:

Բրիտանական մշակույթում նույնպես առավել կարևորվում է այն փաստը, որ տունը պատկանում է իրեն: Ի դեպ, **home** բառը հիմնականում կիրառելի է բնակելի տարածքներ անվանման դեպքում, իսկ **house**-ն ունի նաև *վարչական, հատուկ նշանակության տարածք* իմաստը: **Home** և **house** բառերին հայերենում կարող են համապատասխանել տարբեր բառեր՝ *Home Office -ներքին գործերի նախարարություն, Old people(s) home - ծերանոց, Alms/ poor house - աղքատների սպաստարան, House of Commons -Համայնքների պալատ* և այլն:

Ամերիկացիների համար սեփական տուն ունենալը կարևորագույն ձեռքբերումներից է, քանզի այն կազմում է *ամերիկյան երազանքի* մի մասը և համարվում է անձի կայացման և հաջողության ցուցիչ:

Ե՛վ հայ, և՛ բրիտանական, և՛ ամերիկյան լեզվամշակույթներում **տուն** հասկացույթը զուգորդվում է **հայրենիք** հասկացույթի հետ: **Հայրենիք, պետություն, ծննդավայր** հասկացություններն ունեն տարբեր բովանդակություններ. Որևէ ազգի կամ էթնոսի անդամը կարող է ծնվել ու ապրել իր հայրենիքից դուրս, լինել ոչ իր հայրենի պետության քաղաքացին, այդուհանդերձ, նրա հայրենիքն իր նախահայրերի բնօրրանն է, ծննդավայրը, **տունը**:

Հայի ընկալմամբ իր երկիրը իր տունն է, (օրինակ՝ **Թորգոմայ Տուն**): Տան և հայրենիքի նույնացումը կարելի է նկատել նաև հայ ժողովրդի դյուցազներգության մեջ՝ «**Սասունցի Դավիթ**» էպոսում: «Սասունցի Դավիթ» էպոսը ըստ բանասացների ունի մի քանի անուն՝ «**Սասնա ծոեր**», «**Ջջջանց տուն**», «**Մեծերի տուն**», «**Ավազների տուն**», «**Հսկաների տուն**»:

Բրիտանացիների համար հայրենասիրությունը սկսվում է հենց տնից, ընտանիքից: Հետաքրքրական է, որ թեև անգլերենում կա **motherland (հայրենիք)** բառը, սակայն այն արհեստածին է թե՛ բրիտանացիների և թե՛ ամերիկացիների համար և առավելապես կիրառվում է օտարերկրացիների կողմից: Դրա փոխարեն նրանք կիրառում են **home, homeland** բառերը՝ տունը բրիտանացիների համար **հայրենիք** է՝ *Home, sweet home, East or West, home is best*:

Ամերիկյան մշակույթի տարբերակիչ հատկանիշներից է տունը որպես **հայրենիք** ընկալելը, սակայն այլ տեսանկյունից՝ **որտեղ տուն, այնտեղ՝ հայրենիք**: Այս ընկալումը մասամբ ձևավորվել է ամերիկյան գաղութաբնակների՝ նոր երկրում իրենց սեփական տարածքը՝ տունը ունենալու գաղափարի հիման վրա: Ամերիկյան ընկալմամբ՝ **հայրենիքը** հիմնականում անհատի պատրաստակամությունն ու ցանկությունն է՝ ընդունել այն սկզբունքներն ու գաղափարները, որոնք իրենց նոր պետության կազմավորման հենքն են եղել:

Ներկա ժամանակաշրջանում **տունը** նաև մարդու **հասարակական դիրքի, բարեկեցության** արտահայտման միջոցներից է: Հայի համար տան բարեկեցությունը ոչ այնքան ֆիզիկական կամ նյութական, որքան հոգևոր

նշանակություն ունի և ենթադրում է ընտանեկան բարօրություն և բազմազավակություն՝ **յոթը որդով սեղան նստել, տունը լիքը լինել**:

Բրիտանական մշակույթում առկա է **տան** արտաքին և ներքին հարդարանքի միջոցով ընտանիքի բարեկեցության, հասարակական դիրքի շեշտադրման միտումը: Այստեղ կարևորվում են տան ֆիզիկական հատկանիշները՝ կառուցվածքը, մեծությունը, ներքին հարդարանքի բազում առարկաները:

Ամերիկյան տունը նույնպես կարող է բնակիչների հասարակական դիրքի և բարեկեցության ցուցիչ լինել: Առավել բարեկեցիկ կյանք վարող ամերիկացիները գերադասում են գեղատեսիլ կառուցված առանձնատները՝ ծովափնյա շրջաններում:

Հետաքրքրական է, որ հայերենի **օջախ** և անգլերենի **home** բառերը ներկայացնում են **տուն** հասկացույթը ոչ միայն ֆիզիկական առումով, այլև առնչվում են տան **ոգու**, այնտեղ **տիրող մթնոլորտի** հետ՝ **Home is home though it never be homely. Ուր ուզում ես գնա, տնից լավ տեղ չկա**:

Երեք լեզվամշակույթներում **տուն** հասկացույթի արժեքային բաղադրիչը մարդն է, նրա ներաշխարհը, բնավորությունը, սովորությունները, բարեկեցությունը, հոգեվիճակը՝ **Go where he will, a wise man is always at home (խելամտություն), Տունը սև կապել (դժբախտություն) և այլն**:

Երեք մշակույթներում էլ առկա է **տան կրակի, օջախի** գաղափարը, որը ապահովում է տան ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգևոր ջերմությունը:

Այսպիսով, երեք մշակույթներում **տուն** հասկացույթի բովանդակության պլանում առկա են **բնակելի տարածք, հասարակական հաստատություն, հայրենիք, ընտանիք, հասարակական դիրք, բարեկեցություն, բնավորություն, կենցաղ և հոգեվիճակ** իմաստային խմբերը: Սակայն եթե հայ մշակույթում տուն հասկացույթն ունի նաև **ընտանեկան օջախ, հայրական օջախ, հյուրընկալություն, կապվածություն, մտավոր աշխարհ, ներաշխարհ ու լեզու**, բրիտանականում՝ **ընտանեկան օջախ, հյուրընկալություն, ներաշխարհ, օրենսդրություն և դրա հետ կապված այլ ընկալումներ, հարմարավետություն, կյանքից հեռանալը, կապվածություն** իմաստային տարբերակները, ապա ամերիկյան մշակույթում առկա են **օրենսդրություն և դրա հետ կապված այլ ընկալումներ, ազատություն, հարմարավետություն ու կյանքից հեռանալ** իմաստային, հասկացական և արժեքային բաղադրիչները:

Երկրորդ ենթազիխում (<<Տունը՝ որպես նյութական մշակույթի տարր>>) տունը դիտարկվում է որպես մարդու կողմից ստեղծված կենցաղային տարր (արտեֆակտ) է և հագուստի ու սննդի հետ միասին մարդու հիմնական, առաջնային և տարրական պահանջումն է: Այն, լինելով նյութական մշակույթի տարր, հստակորեն դրսևորում է նաև ոչ նյութական մշակույթի առանձնահատկություններ, բացահայտում է տվյալ մշակութակրի

գեղագիտական ընկալումները, հարմարավետության և մարդկանցից առանձնանալու, սեփական անկյունն ունենալու պահանջմունքը և այլն: Չնայած մարդկանց հիմնական պահանջմունքների նույնության՝ մշակութային տարբերություն կա այն հարցում, թե ինչպես են մարդիկ կառուցում և ընկալում իրենց տունը: Ազգային-մշակութային տեղեկատվության հիմնական կրողն այս դեպքում ազգային ճարտարապետության հնագույն հուշարձանների ձևերն են:

Այս ենթագլխում պատմական և ազգագրական նյութերի համեմատական վերլուծությամբ փորձ է արվում բնութագրել հայերի, բրիտանացիների և ամերիկացիների բնակարանային համալիրները՝ կառուցվածքային և հատակագծային բնորոշ առանձնահատկություններով:

Երրորդ գլխում (<<Տուն>> **հասկացույթի լեզվականացումը հայ, բրիտանական և ամերիկյան լեզվամշակույթներում**>>) ուսումնասիրվում են տուն հասկացույթի հասկացական և արժեքային դրսևորումները հայերի, բրիտանացիների և ամերիկացիների աշխարհի պատկերում:

Առաջին ենթագլխում (<<Տուն հասկացույթի անվանակարգումը հայ, բրիտանական և ամերիկյան լեզվամշակույթներում (հիմաստաբանական, ստուգաբանական և վիճակագրական վերլուծություն)>>) երկու զուգադրվող լեզուներում **տուն** հասկացույթի անվանակարգումը /nomination/ որոշելու համար վեր են հանվում հայերենի և անգլերենի այն բառային միավորները, որոնցով տվյալ հասկացույթը լեզվականացվում է հայ և անգլաամերիկյան աշխարհի լեզվական պատկերներում, ինչպես նաև իրականացվում է այդ բառերի հիմաստաբանական և ստուգաբանական քննություն:

Ուսումնասիրելով հայերենի և անգլերենի բացատրական բառարաններում, լիակատար բառարան-գանձարաններում (թեզաուրուս) և հոմանիշների բառարաններում⁹ ամրագրված տվյալները՝ կարելի է փաստել, որ **տուն** հասկացույթը հայկական աշխարհի լեզվական պատկերում առկայանում է **տուն, ապարանք, առանձնատուն, բնակարան, գետնախորշ, դաստակերտ, դրյակ, ետնախորշ, երդ, խուղ, խրճիթ, ծղաղակ, կացարան, հյուղ, հյուղակ, մենատուն, յուրդ, պալատ, վրան, տաղավար, տնակ, քողտրիկ, օթևան** (23), իսկ բրիտանացիների և ամերիկացիների աշխարհի լեզվական պատկերում՝ **house, home, building, household, dynasty, residence, abode, dwelling, lodging, accommodation, domicile և habitation** (12) հոմանիշային շարքերով:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայերենում **տուն** բառն իմաստային առումով տարողունակ է (մոտ 30 բառիմաստային տարբերակ (ԲԻՏ),

⁹Մեղմագրի ծավալից էլնելով՝ չենք ներկայացնում օգտագործված բառարանները. դրանք նշված են ատենախոսության գրականության ցանկում:

որն էլ թույլ է տալիս այն ընդունել որպես **տուն հասկացույթի հիմնական անվանակարգում**՝ չբացառելով, սակայն, այլ բառերի օգտագործումը որպես **տուն** հասկացույթի բառայնացման միավորներ:

Բառարանային հոդվածներում **house** բառը ներկայացված է երկու խոսքի մասերով՝ որպես գոյական՝ **house** (n.) և որպես բայ՝ **house** (v.): Ըստ բառարաններում ամրագրված **house** բառի իմաստային ամբողջական ցանկի՝ **house** (n.) գոյականը, որն ունի 20 ԲԻՏ, իր իմաստային դաշտով ծածկում է **house** (v.) բայի նշանակությունները (բացառություն է կազմում միայն **house** (v.) բայի <<to fit into a socket or mortise>> ԲԻՏ-ը), որը թույլ է տալիս եզրակացնել, որ **house** (n.) բազմիմաստ գոյականը **տուն** հասկացույթի անվանակարգումներից է:

Բառարանային հոդվածներում **home** բառը ներկայացված է հետևյալ խոսքի մասերով. **home** (n.)- գոյական, **home** (adj.)- ածական, **home** (adv.)-մակբայ, **home** (v.) – բայ, ընդ որում՝ **home** (n.) – գոյականը ունի 25 ԲԻՏ, **home** (adj.)-ածականը՝ 6 ԲԻՏ, **home** (adv.)-մակբայը՝ 4 և **home** (v.)-բայը՝ 4 ԲԻՏ: Կարելի է փաստել, որ **home** (n.)-գոյականի իմաստային դաշտը հիմնականում ծածկում է **home** բառի բոլոր իմաստները, ուստի՝ **home** (n.)-գոյականը նույնպես **տուն** հասկացույթի անվանակարգումներից է:

Այսպիսով, վստահաբար կարելի է փաստել, որ անգլերենում **տուն** հասկացույթն ունի երկու անվանակարգում՝ **house** և **home**, որոնք թե՛ իրենց կիրառման հաճախականությամբ և թե՛ առավել մեծ իմաստային դաշտով գերիշխում են այդ բառի հոմանիշային շարքում:

Տուն, home և **house** բառերի ընդհանուր իմաստներն են՝ *բնակարան, սենյակ, ընտանիքի անդամներ, տնային տնտեսություն*: Նշենք, որ հայերենի **տուն** բառի արտահայտած իմաստների մի մասը տրամախաչվում է **home** բառի հետ, մյուսներն էլ՝ **house** բառի հետ:

Յուրաքանչյուր բառի դեպքում հնարավոր է առանձնացնել նաև տարբերակիչ իմաստներ: Այսպես, հայերենում **տուն** գոյականը արտահայտում է նաև հետևյալ իմաստները, որոնք չկան անգլերենի **home** և **house** բառերի իմաստային դաշտում՝ 1. *ժողովին, 2. տունտուլակ, 3. խելք, միտք, 4. ամուլ, ուժտուն, խարզնտուն, խնձորտուն, մկնտուն, փոշետուն, հորետուն (գութանին լծված յուրաքանչյուր լուծը), 5. բանաստեղծություն, քառատող, 6. չափման միավոր*:

Իսկ անգլերենում **home** և **house** բառերը արտահայտում են հայերենի **տուն** բառին ոչ բնորոշ հետևյալ իմաստները. **home** – 1. *root, origin, source, 2. environment, 3. base. 4. national, internal*; **house** – 1. *a group of people who meet to discuss and make the laws of a country: the House of Parliament, etc. 2. the part of a theatre where the audience sits, 3. audience*:

Եթե անգլերենում բնակարանների մի շարք տեսակներ բառայնացված են, ապա հայերենում դրանք ներկայացվում են բառակապակցությունների կամ բացատրությունների միջոցով. **apartment, digs**-վարձակալած տուն/բնակարան,

longhouse-ավանդական ամերիկյան տուն, *penthouse* - թանկարժեք և հարմարավետ տուն շենքի կտուրին և այլն:

Չայերենի և անգլերենի **տուն** հասկացույթի բառայնացման միջոցներն ունեն կիրառման տարբեր հաճախականություններ՝ ըստ բառարանի և ազգային կորպուսի, որոնց վիճակագրական տվյալները ներկայացվում են:

Երկրորդ ենթագլխում (<<**Տուն հասկացույթի վերլուծությունը՝ հայերեն և անգլերեն ԴՄ-ների հիման վրա**>>) գուգադրվում են **տուն** և նրան առընթեր բաղադրիչներով անգլերեն և հայերեն ԴՄ-ները, առաձներն ու ասացվածքները, վերհանվում դրանցում արտահայտված ազգային, մշակութային, ինչպես նաև կենցաղավարման առանձնահատկությունները և, այդպիսով, բացահայտվում **տուն** հասկացույթի գուգորդային դաշտերը՝ հայ և անգլաամերիկյան լեզվամշակույթներում:

Ուսումնասիրելով **տուն** և նրան առընթեր բաղադրիչներով հայերեն և անգլերեն ԴՄ-ները, ասացվածքներն ու առաձները (հայերենում՝ 100, անգլերենում՝ 70 միավոր)՝ **տուն** հասկացույթի հաղորդակցական-տեղեկատվական դաշտում առանձնացրել ենք հետևյալ իմաստային խմբերը, որոնք կազմում են հասկացույթի պատկերային բաղադրիչը. ***բնակարան և ընտանեկան օջախ, հասարակական/օրենսդրական հաստատություն, ընտանիք, ընտանեկան օջախ, հայրենիք, բարեկեցություն, բնավորություն/մարդկային որակ, հուրընկալություն, զգայական ընկալումներ, մտավոր կարողություններ, կենցաղ, հոգեվիճակ:***

Չայերենում **տուն** հակացույթի ***բնակարան, ընտանեկան օջախ*** իմաստային խումբը կարող է արտահայտվել ***ծուխ, օջախ, տուն, օձորք բաղադրիչներով կազմված*** ԴՄ-ներում, առաձներում ու ասացվածքներում՝ ***հոր ծուխը ծխացնել, օձորքը սնացնող/ մրտտող լինել:*** Անգլերենում այն կարող է արտահայտվել ***home և house բաղադրիչներով կազմված*** ԴՄ-ներում, առաձներում ու ասացվածքներում՝ ***come/get/go home with the milk, hearth and home,*** որոնցում սակայն գերակշռում են ***home*** բաղադրիչով դարձվածքները:

Օրենսդրություն, օրենսդրական հաստատություն իմակը առկա է միայն անգլերենում, որը վառ արտահայտված է անգլերենի դարձվածային ֆոնդում, և, ըստ երևույթին, արդյունք է բրիտանական և ամերիկյան հասարակության կյանքում կառավարության դերի և ազդեցության կարևորման՝ ***cross the floor of the House, the White House, House of Lords*** և այլն: Իսկ հայ մշակույթում ձևավորվել է ***հասարակական հաստատություն*** իմաստային խումբը, քանզի առավել մեծ կարևորություն է տրվել հասարակական կարիքներին և խնդիրներին՝ ***տեքունական տուն, վատահամբավ տուն, Աստծո տուն*** և այլն:

Տուն հասկացույթը թե՛ հայ, թե՛ բրիտանական և թե՛ ամերիկյան լեզվամշակույթներում գուգորդվում է ***ընտանիքի*** հետ: **Տուն** հասկացույթի ***ընտանիք*** բաղադրիչ-հասկացույթը հայերենում արտահայտվում է ինչպես ***տուն*** և

օջախ, այնպես էլ տան տարբեր մասերի՝ **օձորք, սյուն, պատ** բառերի միջոցով՝ **տան տղա, տան քոթուկ, ճրագ կպցնել**, իսկ անգլերենում՝ **home** բառային միավորի միջոցով՝ **broken home, with the whole home, home boy** և այլն:

Հայերենում **տուն** հասկացույթի **բարեկեցություն** իմաստային խումբը հիմնականում արտահայտվում է **տուն, օջախ, դուռ և պատ** բաղադրիչով կազմված ԴՄ-ներում՝ **տուն տեղ ղնել/դառնալ**, անգլերենում՝ **house և home** բաղադրիչով կազմված ԴՄ-ներում՝ **the red cock will crow in his house** և այլն:

Հայերենում **տուն** հասկացույթի **բնավորություն/մարդկային որակ** իմաստային խումբը կարող է արտահայտվել **դուռ, օջախ, տուն և բույն** բառային միավորներով կազմված ԴՄ-ներում՝ **յոթ տան վարսիք** (անբարոյականություն), **տունը պոպուկի մեջի պես պահել** (մաքրասիրություն) և այլն:

Իսկ անգլերենում այն արտահայտվում է **house և home** բաղադրիչով կազմված ԴՄ-ներում՝ **write home about** (հպարտություն, պարծենկոտություն), **hang up one's fiddle when one comes home** (կեղծավորություն) և այլն:

Հյուրընկալություն իմաստային խումբը ներկայացնում է **տուն** հակացույթի արժեքային և պատկերային բաղադրիչները: Երեք լեզվամշակույթներին էլ բնորոշ է **տուն** հակացույթի զուգորդումը հյուրընկալության հետ, սակայն կան հստակ դրսևորված մշակութային տարբերություններ: Հայերենում **տուն** հակացույթի **հյուրընկալություն** իմաստային խումբը ներկայացվում է **տուն, դուռ, օջախ**, իսկ անգլերենում՝ **house և home** բաղադրիչներով կազմված ԴՄ-ներում՝ **տան դուռը բաց անել (մեկի առաջ), օջախը ընկնել, to be at home to smb., keep open house** և այլն:

Տուն հակացույթի իմաստային դաշտում առանձնանում են նաև **կենցաղ, նպատակակետ, կյանքից հեռանալ, գերեզման և մտավոր կարողություններ** իմաստային խմբերը, որոնք, սակայն, բնորոշ են ուսումնասիրվող լեզվամշակույթներից ոչ բոլորին:

Երեք լեզվամշակույթներում էլ իբրև **տուն** հակացույթի հասկացական բաղադրիչ դիտվում են <<**իք և այլոց**>> և <<**բաց-փակ**>> հակադրությունները: Եթե հայ լեզվամշակույթում տան **բաց լինելը** զուգորդվում է տան, ընտանիքի, տանտիրոջ հյուրընկալության, մեծահոգության հետ, ապա բրիտանական և ամերիկյան լեզվամշակույթներում այն բացասական ընկալում ունի, քանի որ զուգորդվում է ընտանիքի ամբողջականության խախտման հետ:

Այսպիսով, երեք լեզվամշակույթներում տան հակացույթի արժեքային բաղադրիչը մարդն է, նրա ներաշխարհը, մտավոր կարողությունները, բնավորությունը, սովորությունները, բարեկեցությունը, հոգեվիճակը:

Եզրակացության մեջ ամփոփվել են ուսումնասիրության հիմնական արդյունքները:

1. <<**Տունը**>>՝ **որպես լեզվամշակութային հասկացույթ**, ներառում է հասկացական, արժեքային (բովանդակության պլան) և պատկերային

(արտահայտության պլան) բաղադրիչները և ունի գործառական, հաղորդակցական-տեղեկատվական, խորհրդանշային-պատկերավոր և արժեքային բնույթ: **Տուն** հասկացույթը, լինելով համամարդկային հիմնական տարածական հասկացություններից մեկը, որն առավելագույնս է արտացոլում մարդու ամենօրյա գործունեությունը և նրան շրջապատող իրականությունը, հայ, բրիտանական և ամերիկյան լեզվամշակույթներում զբաղեցնում է առանցքային դիրք: Տան նախատիպային (architype) պատկերացումներում այն զուգորդվում է սեփական, ապահով տարածքի, ինչպես նաև մարդուն արտաքին աշխարհից առանձնացնող և պաշտպանող անկյան հետ: **Տուն** հասկացույթի հիմնատիպը (prototype) վեր հանելիս առնչվում ենք տվյալ ժողովրդի կրոնական պատկերացումների և ճանաչողական գիտելիքների հետ: **Տուն** հասկացույթը մտնում է <<նյութական մշակույթ>> հասկացության մեջ: **Ազգային-մշակութային տեղեկատվության** հիմնական կրողը ազգային ճարտարապետության հնագույն հուշարձանների ձևերն են:

2. Տունը միկրոտիեզերք է, մարդու յուրահատուկ աշխարհը, որտեղ գործում են <<իր>> օրենքները: Տունը մարդու մասշտաբներին հարմարեցված՝ իր ստեղծած աշխարհն է, և այս հանգամանքի հետ կապված մարդու աշխարհընկալումներում հաճախ հանդիպում է իր տան՝ անվտանգ, ապահով տարածքի հակադրումը հակատան (antyhome, антидом) *այլոց*, ուստի և վտանգներով լի տարածքի հետ:

3. Ե՛վ հայ, և՛ բրիտանական, և՛ ամերիկյան մշակույթներում **տուն** հասկացույթը առնչվում է տարածական և սոցիալ-հոգեբանական ընկալումների հետ: Տունը հայ ինքնության գլխավոր սյուներից մեկն է: Հայի համար տունը նախ և առաջ հայրենի օջախն է, ընտանիքը, հոր տունը: Անգլիացու համար իր տունն իր ամրոցն է, և **տուն** հասկացույթը սերտորեն կապված է բրիտանական մշակույթում գերիշխող մի շարք այլ՝ *privacy* (առանձնություն), *tradition* (ավանդույթ) հասկացությունների հետ: Ամերիկյան մշակույթում տունը անհատի կացարանն է, նրա ինքնության գրավականը և համակցվում է *հարմարավետություն* հասկացույթի հետ՝ զուգորդվելով <<ամերիկյան երազանքի>> հետ և համարվելով անձի կայացման և հաջողության ցուցիչ:

4. Երեք մշակույթներում էլ **տուն** հասկացույթը անքակտելիորեն կապված է **ընտանիք** հասկացույթի հետ: Ընտանիքում թե՛ **կինը**, և թե՛ **տղամարդը** իրենց ուրույն դիրքն ու տեղն ունեն: Եթե հայ մշակույթում **տան տղամարդն** է տան **հենասյունը**, տան գլուխը, ապա բրիտանական և ամերիկյան ընտանիքների հիմքը **կինն է**:

5. Երեք լեզվամշակույթներում էլ որպես **տուն** հասկացույթի պատկերային և զգայական բաղադրիչ՝ կարելի է դիտարկել տանը <<մոտ-հեռու>> լինելու իմակը, որը հիմնականում արտահայտվում է **ճանապարհ** հասկացույթի միջոցով: Տանից հեռու լինելը երեք լեզվամշակույթներում էլ ունի բացասական և հետևաբար մոտ լինելը՝ դրական ընկալում:

6. Տունը մարդու կողմից ստեղծված կենցաղային տարր (արտեֆակտ) է և հագուստի ու սննդի հետ միասին համարվում է հիմնական, առաջնային և տարրական պահանջմունք: Լինելով նյութական մշակույթի տարր՝ այն հստակորեն դրսևորում է նաև ոչ նյութական մշակույթի առանձնահատկություններ, բացահայտում է տվյալ ժողովրդի և մշակութակրի հարմարավետության և մարդկանցից առանձնանալու, սեփական անկյունն ունենալու պահանջմունքը, գեղագիտական ընկալումները և այլն:

7. **Տուն** հասկացույթը հայկական աշխարհի լեզվական պատկերում առկայանում է *տուն, ապարանք, առանձնատուն, բնակարան, գետնախորշ, դաստակերտ, դղյակ, ետնախորշ, երդ, խուղ, խրճիթ, ծղաղակ, կացարան, հյուղ, հյուղակ, մենատուն, յուրդ, պալատ, վրան, տաղավար, տնակ, քոչորիկ, օթևան* (23), իսկ բրիտանացիների և ամերիկացիների աշխարհի լեզվական պատկերում՝ *house, home, building, household, dynasty, residence, abode, dwelling, lodging, accommodation, domicile u habitation* (12) հոմանիշային շարքերով:

8. Հայերենում **տուն** հասկացույթն ունի մեկ անվանակարգում՝ *տուն*, անգլերենում երկու՝ *house* և *home*, որոնք թե՛ կիրառման հաճախականությամբ, և թե՛ իմաստային դաշտերով գերիշխում են իրենց հոմանիշային շարքում:

9. Հայերենում **տուն** բառն ունի 29-30 *բառիմաստային տարբերակ (այսուհետ՝ FFS)*, և իր լայն իմաստային դաշտով գերազանցում է **տուն** հասկացույթի հայերենի մյուս ներկայացուցիչ-բառերին:

Անգլերենում *house (n.)* գոյականը, որն ունի 20 FFS, իր իմաստային դաշտով ծածկում է *house (v.)* բայի նշանակությունները, իսկ *home (n.)*- գոյականի իմաստային դաշտը, որը ներկայանում է 25 FFS-երով, ամբողջովին ծածկում է *home* բառի այն բոլոր իմաստները, որոնք արտահայտված են մյուս խոսքի մասերի իմաստային դաշտերում:

10. Հայերենի **օջախ** և անգլերենի **home** բառերը ներկայացնում են **տուն** հասկացույթը ոչ միայն ֆիզիկական առումով, այլև առնչվում են տան ոգու, այնտեղ տիրող մթնոլորտի հետ:

11. Անգլերենի *house* հասկացույթն առավելապես արտացոլում է իրական աշխարհը, այն տեղը, որտեղ մարդն ապրում է՝ որպես հասարակության անդամ, որը որոշակի բարոյական սկզբունքների, հասարակական օրենքների միջոցով ազդում է մարդու վարքի վրա և կանոնակարգում մարդու ընտանեկան հարաբերությունները: Մինչդեռ *home* հասկացույթի համար կենտրոնական գաղափար է մարդը՝ որպես անձ, անհատ: *Home*-ը այն տեղն է, որտեղ մարդն իրեն զգում է ազատ, անկաշկանդ, <<ինչպես տանը>>, և այն կազմավորվում և կարգայանացվում է միայն մարդու գիտակցության մեջ: Այս առումով հայերենի **տուն** և **օջախ** բառային միավորները հիմնականում հավասարազոր են, կարող են փոխադարձաբար կիրառվել և հավասարապես են ներկայացնում **տուն** հասկացույթը:

12. **Տուն** հասկացույթի հաղորդակցական-տեղեկատվական դաշտում (արտահայատության պլանում) առանձնանում են հետևյալ իմաստային խմբերը՝ *բնակարան, ընտանեկան օջախ, հասարակական և օրենսդրական հաստատություն, ընտանիք և ընտանեկան օջախ, հայրենիք, բարեկեցություն, բնավորություն/մարդկային որակ, հյուրընկալություն, զգայական ընկալումներ, կյանքից հեռանալը, կենցաղ, մտավոր կարողություններ*:

- Հայերենում **տուն** հակացույթի **բնակարան, ընտանեկան օջախ** իմաստային խումբը հիմնականում կապված է տունը, հայրենի օջախը շեն պահելու կամ քանդվելու գաղափարի հետ և կարող է արտահայտվել **ծուխ, օջախ, օձորք բաղադրիչներով կազմված** ԴՄ-ներում (**10 ԴՄ**): Անգլերենում այս իմաստային խումբը արտահայտվում է **home և house** բաղադրիչներով կազմված ԴՄ-ներում (**7 ԴՄ**), որոնցում **մեկուսիության և ազատության** բրիտանական ընկալումները ներկայացված են հիմնականում **home**, իսկ բրիտանական մշակույթին բնորոշ զապվածությունը, համեստությունը՝ **house** բաղադրիչով:

- **Տուն** հասկացույթի առարկայական վերաբերության հիմնական միավորներից է **հասարակական, օրենսդրական հաստատություն** իմաստային խումբը, որն արտահայտում է հասկացույթի ֆիզիկական հատկանիշները: **Օրենսդրություն, օրենսդրական հաստատություն** իմակը առկա է միայն անգլերենում (**16 ԴՄ**), իսկ հայ մշակույթում ձևավորվել է **հասարակական հաստատություն** (**4 ԴՄ**) իմաստային խումբը:

- **Տուն** հասկացույթը երեք լեզվամշակույթներում էլ զուգորդվում է **ընտանիքի** հետ: **Տուն** հասկացույթի **ընտանիք** բաղադրիչ-հասկացույթը հայերենում արտահայտվում է ինչպես **տուն** և **օջախ**, այնպես էլ տան տարբեր մասերի՝ **օձորք, սյուն, պատ** միջոցով (**16 ԴՄ**), իսկ անգլերենում՝ **home** բառով (**7 ԴՄ**):

Ընտանիք իմաստով կարող է օգտագործվել նաև **house** բառային միավորը, սակայն այս դեպքում այն ձեռք է բերում նաև **զերդաստան** հարանշանակությունը:

- **Հայրենիք** իմաստային խումբը **տուն** հակացույթի հասկացական, արժեքային և պատկերային բաղադրիչներից է և կենտրոնական դիրք է գրավում հայերի և բրիտանացիների աշխարհի լեզվական պատկերում: Հատկանշական է, որ հայերենում **հայրենիք** իմակը առավելապես կրում է հասկացական բնույթ՝ վառ արտացոլվելով հասկացույթի բովանդակային պլանում: Այն բավական թույլ է արտահայտված արտահայտության պլանում՝ ԴՄ-ներում, առածներում և ասացվածքներում (**4 ԴՄ**): **Հայրենիք** իմաստային խումբն անգլերենում հիմնականում արտահայտվում է **home** բաղադրիչով կազմված ԴՄ-ներում (**10 ԴՄ**), որտեղ **hometown, homeland** բառերը **հայրենիք** նշանակությունից բացի արտահայտում են նաև՝ **հարազատության** գաղափարը:

- Հայերենում **տուն** հասկացույթի **բարեկեցություն** իմաստային խումբը հիմնականում արտահայտվում է **տուն, օջախ, դուռ և պատ** (**18 ԴՄ**), իսկ

անգլերենում *house* և *home* բաղադրիչով կազմված ԴՄ-ներում, առաձներում ու ասացվածքներում (7 ԴՄ): Ինչպես հայերենում, այնպես էլ անգլերենում **տուն** հասկացույթի արտահայտության պլանում գերակշռում են անբարեկեցություն արտահայտող ԴՄ-ները, առաձներն ու ասացվածքները:

- Հայերենում **տուն** հասկացույթի **բնավորություն/մարդկային որակ** իմաստային խումբը կարող է արտահայտվել *դուռ, օջախ, տուն* և *բունջ* բառային միավորներով (15 ԴՄ), իսկ անգլերենում՝ *house* և *home* բաղադրիչով կազմված ԴՄ-ներում: Թե՛ հայերենում, թե՛ անգլերենում **տուն** հասկացույթի **բնավորություն/մարդկային որակ** իմաստային խումբն արտահայտում է մարդկային որակներ, և ավելի մեծ քանակ են կազմում բացասական բնավորության գիծ արտահայտող ԴՄ-երը. Հայերենում՝ բացասական՝ 65%, դրական՝ 35%, իսկ անգլերենում՝ բացասական՝ 57%, դրական՝ 43%:

- Թե՛ հայ, թե՛ անգլաամերիկյան լեզվամշակույթներին բնորոշ է **տուն** հասկացույթի զուգորդումը **հյուրընկալության** հետ, սակայն կան հստակ դրսևորված մշակութային տարբերություններ: Հայերենում **տուն** հասկացույթի **հյուրընկալություն** իմաստային խումբը ներկայացված է *տուն, դուռ*, (8 ԴՄ), իսկ անգլերենում *house* և *home* բաղադրիչներով կազմված ԴՄ-ներով (7 ԴՄ):

- **Տուն** հասկացույթի արտահայտության պլանում արտացոլված իմաստային խմբերում հայերենում քանակապես գերիշխում են **ընտանիք** (16 ԴՄ) և **բարեկեցություն** (18 ԴՄ), իսկ անգլերենում՝ **հասարակական, օրենսդրական հաստատություն** (16 ԴՄ) և **հայրենիք** (10 ԴՄ) իմաստային խմբերը:

Ամփոփելով կատարված աշխատանքը՝ կարելի է փաստել, որ երեք լեզվամշակույթներում **տուն** հասկացույթի արժեքային բաղադրիչը մարդն է, նրա ներաշխարհը, մտավոր կարողությունները, բնավորությունը, սովորությունները, բարեկեցությունը, հոգեվիճակը և այլն:

Տուն հասկացույթը և՛ հայ, և՛ անգլաամերիկյան լեզվամշակույթներում կարևորագույն հասկացույթներից է՝ իր հասկացական և արժեքային ընկալումներով և ունի ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: **Տուն** հասկացույթի հայ, բրիտանական և ամերիկյան ընկալումների տարբերությունները հիմնականում բացատրվում են աշխարհաքաղաքական, տնտեսական և մշակութային զարգացումներով, այդ ժողովուրդների կենսակերպով, հոգեկերտվածքով և արժեհամակարգերով:.

Աշխատանքի հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. <<*Տուն*>> հասկացույթի լեզվամշակութային առանձնահատկությունները անգլերենում և հայերենում//<<Կանթեղ>> 2 (51), <<Աստղիկ>> հրատ., Երևան, 2012, էջ 48-55:

2. <<Տուն>> հասկացույթի լեզվականացումը հայ, բրիտանական և ամերիկյան լեզվամշակույթներում //<<Կանթեղ>> 4 (53), <<Աստղիկ>> հրատ., Երևան, 2012, էջ 52-60:
3. Формально-структурный анализ английских терминов словосочетаний лексико-семантической группы <<дом/жилье>> // <<Բանբեր>> հանդես 1(21), ԵՊՀՀ <<Լինգվա>> հրատ., Երևան, 2012, էջ 82-90/Գ. Եղիազարյանի համահեղինակությամբ/:
4. Семантический анализ лингвокультурологического концепта <<дом>> на основе английских фразеологических единиц //<<Աստղիկ>> հանդես (22-23), ԵՊՀՀ <<Ստիակ Պարթև>> հրատ., Երևան, 2012-2013, էջ 234-239.

ТЕР-ПОГОСЯНЦ АРУСЯК
КОНЦЕПТ “ДОМ ” В АРМЯНСКОЙ И АНГЛО-АМЕРИКАНСКОЙ ЛИНГВО-
КУЛЬТУРАХ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10. 02. 03 - <<Сравнительное и типологическое языкознание>>

Защита состоится 7-го октября, 2013, в 15.00 часов, на заседании специализированного совета 019 ВАК при Институте языкознания им. Р. Ачаряна. (по адресу: 0015, г. Ереван, ул. Г. Лусаворича 15)

РЕЗЮМЕ

Реферируемая диссертация посвящена сравнительно - сопоставительному анализу лингво-культурологических концепта **дом** в армянской, британской и американской лингвокультурах, выделению их общих и различительных особенностей.

Во введении обосновывается актуальность темы, отмечается новизна исследования, представляются основные цели и задачи работы, кратко излагаются принципы и методы исследования.

Актуальность исследования.

В последние десятилетия значительные изменения, возникшие в научной жизни, привели к необходимости рассмотрения ряда существенных понятий. Миссию исследования феноменов в цепочке *язык-культура-когнитивизм* взяли на себя когнитивная лингвистика и лингвокультурология. **Целью работы** является проведение сравнительно - сопоставительного анализа смысловых, структурных и ценностных особенностей концепта **дом**, выявление общих и различительных

особенностей его содержательного приращения в армянском и английском мировосприятии.

Предметом данного исследования является концепт **дом** в армянской, британской и американской лингвокультурах.

Научная новизна исследования.

В диссертации впервые четко и акцентированно выделяется, характеризуется и анализируется концепт **дом** и средства его актуализации на основе широкого языкового материала, который включает номинативные средства концепта **дом** на словарном и фразеологическом уровне, его синонимические ряды и словарные манифестации в армянском и английском языках.

Задачи исследования:

1. провести всестороннее исследование основной единицы когнитивной лингвистики и лингвокультурологии - термина *концепт* и основные методы анализа концепта;

2. исследовать когнитивный, лингвокультурологический концепт **дом**, выявляя его понятийные и ценностные составляющие в трех культурах;

3. сопоставить средства актуализации концепта **дом** на словарном и фразеологическом уровнях и систематизировать полученные результаты, выявляя роль языковых и внеязыковых факторов в трех культурах.

Языковым материалом исследования послужили английские и армянские фразеологические единицы, пословицы и поговорки, которые актуализируют концепт **дом**; также проанализированы смысловые и ассоциативные поля концепта.

Методологической основой для нашего исследования послужили идеи и взгляды специалистов и лингвистов в области когнитивной лингвистики. При анализе концепта **дом** были использованы метод сплошной выборки, концептуальный анализ, сопоставительный анализ и методы параллельного комментирования. Также было выполнено исследование лингвистических корпусов и статистический анализ.

Языковым материалом исследований послужили английские и армянские фразеологические единицы, пословицы и поговорки актуализирующие концепт **дом**.

Теоретическая значимость исследования.

Результаты данного исследования могут способствовать дальнейшему исследованию единиц концептуальной системы языка, а также выработке сопоставительно- концептуальной методики.

Практическая ценность исследования.

Результаты данного исследования могут быть использованы при составлении спецкурсов по лингвокультурологии, когнитивной лингвистики и в

сопоставительной семантике английского и армянского языков, а также при создании практических пособий и словарей.

Структура работы. Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и 2 приложений.

ARUSYAK TER-POGHOSYANTS
THE CONCEPT “HOME/HOUSE” IN ARMENIAN,
BRITISH AND AMERICAN LINGUO-CULTURES
Thesis for the degree of candidate of philological sciences, speciality 10.02.03-
“Comparative and Typological Linguistics”

The defense of the thesis will be held at 15.00, on October 7, 2013, at the session of the Special Board 019 HAC (Higher Attestation Commission) to award degrees under the Institute of Linguistics after H. Acharyan (address: 0015, st. G. Lusavorich, 15).

RESUME

In the last decades the significant changes in scientific thinking resulted in the necessity of reconsidering a number of essential notions. The notion of meaning has always been high on the agenda of linguistic studies, as the words in different languages can transfer the same meaning but the way of thinking peculiar to some language community can be different from that of another community.

The topicality of the research: The concept **house/home** is of particular interest as it is among the universal cognitive and cultural concepts which have the same references but often different significance and perceptions in different languages, being fit for the comparative analysis.

The scientific novelty of the research:

- for the first time the concept **house/home** is singled out, characterized and analyzed in three - Armenian, British and American linguo-cultures on the basis of rich language material in English and Armenian,
- the comparison of the concept **house/home** is new and interesting as different languages are bearers of different cognitive perspectives which receive different verbalization means in the language reflecting a certain culture.
- the data provided by the corpus analysis have enabled us to reveal the differences in the perception and utilization frequency of this universal concept, depending on the cultural and language activity of a certain language-bearer,

- the representation of the associative fields of the concept **house/home** in two languages is new, too,

Through this research we can contribute to the establishing of the opinion that the concept **house/home** is a complex mental structure, representing the relationship between peoples and nations. It is a discrete unit of collective consciousness which reflects a number of conceptual and valuable peculiarities and can serve as a basis for revealing some traits peculiar to the Armenian, British and American linguo-cultures.

The aim of the research: The research **aims** at surveying the concept **house/home** in the Armenian, English and American cultures and revealing language similarities and differences through comparative analysis.

The concept **house/home** is analyzed on the basis of language material which contains the nomination means of the mentioned concept on the word level, its synonymic chains and phraseological manifestations in English and Armenian.

The objectives of the research:

- to investigate the main unit of cognitive linguistics and cultural linguistics - the term **concept**, and the main methods of the analysis,
- to investigate the cognitive and linguo-cultural concept **house/home**, revealing its conceptual and valuable constituents in Armenian, British and American cultures,
- to compare the actualization of the concept **house/home** on the basis of the word and phraseological levels and to systematize the results.

The theoretical significance of the research: The results of the given research can contribute to further investigations of the conceptual system of a language. The research is of value not only in the field of Cognitive Linguistics, but also in those of Ethnolinguistics, Cultural Studies and Conceptology.

The practical value of the research: The research may contribute not only to the development of cross-cultural and cross-linguistic relations, but also to the realization of exact translations from English into Armenian and from Armenian into English. The results of the research can have a number of practical applications: they can be applied in the courses of Ethnolinguistics and Cognitive Linguistics, Cross-Cultural Communication, as well as for compiling manuals and dictionaries.

The structure of the research: The structure of the research flows from the issues touched upon in the research. It consists of an introduction, three chapters, conclusion, bibliography and two appendices.